

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ  
(ԱՇԽԱՐՀԱԲԱՐ)

Կը հաւատամ մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօր,  
արարիչը երկինքի ու երկրկի եւ ամէն բաներուն, տեսանելի ու  
անտեսանելի:

Եւ մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի,  
Հօր Աստուծոյ միածին Որդւոյն,  
Հօր Աստուծմէ սերած յաւիտենականութենէն առաջ.  
Աստուած Աստուծմէ, Լոյս Լոյսէ, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուծմէ.  
սերած, ո՛չ արարած,  
Աստուծոյ համագոյակից,  
որով ամէն բան ստեղծուեցաւ:

Որ մեզի՝ մարդոցս համար (*մարդկութեան, մարդկային ցեղին*) եւ մեր  
փրկութեան համար,  
երկինքէն իջաւ,  
մարմնացաւ Սուրբ Հոգւոյն միջոցով կոյս Մարիամէն,  
եւ մարդացաւ.

խաչուեցաւ մեզի համար Պոնտացի Պիղատոսի իշխանութեան տակ:

Չարչարուեցաւ եւ թաղուեցաւ.  
ու երրորդ օրը յարութիւն առաւ,  
Գիրքերուն համեմատ.

եւ երկինք համբարձաւ,  
ու Հօրը աջ կողմը կը նստի,  
եւ նորէն պիտի գայ, փառքով,  
դատելու ողջերն ու մեռածները.  
որուն թագաւորութիւնը անվախճան պիտի ըլլայ (*այսինքն՝ Տէր Յիսուս  
Քրիստոսի թագաւորութիւնը*):

Եւ (*կը հաւատամ*) Սուրբ Հոգիին՝ (1)  
Տէր ու կենարար,  
որ կը բխի Հօրմէն ու Որդիէն. (2)  
որ Հօրը ու Որդիին հետ միասնաբար կը պաշտուի ու կը փառաւորուի,  
որ խօսեցաւ մարգարէներուն միջոցով: (3)

Եւ (*կը հաւատամ*) մէկ ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցիին:

Կը խոստովանիմ մէկ մկրտութիւն մեղքերու թողութեան համար.

եւ կ'ակնկալեմ մեռելներու յարութեան,

եւ ապագայ յաւիտենական կեանքին:

Ամէն:

*Ծանոթութիւններ.*

(1) Նիկիայի Ժողովին 325 թուականի հանգանակը հոս կը վերջանար եւ անոր կը հետեւէին «նպովեալք»-ը (տե՛ս վարը): Ասոր հետեւող մասերը 381-ին աւելցուեցան եւ վերջնականօրէն ընդունուեցան 451-ին, Քաղկեդոնի ժողովին մէջ: Ոմանք հոս կ'աւելցնեն՝ անեղ է- հապարեալ Լսոյ-ա՞, Տէր ո- կենարար, Քաշխող շնորհաց է- րո-ող Տշմարտո-թեան.

(2) «ու Որդիէն»՝ այսինքն, Սուրբ Հոգիին կրկնակի բխումը, աւելցուեցաւ 589-ին:

(3) Ոմանք հոս կ'աւելցնեն՝ որ խօսեցա- Օրէնչի է- Մարտարէներո- (գիրքերուն) է- Լ-եպարաններո-ն միջոցա-, որ Յորդանան Գեղը իջա-, Էարողեց Լա-ալեալներո-ն միջոցա- է- սորթերո-ն մեջ բնակեցա- է- կը բնակի:

*«Նպովեալք», որոնք նաեւ բոլորովին ընդունուած են որպէս ուղղաբառ, բայց բուն հանգանակին մաս չեն կազմեր.*

Իսկ անոնք, որոնք Աստուծոյ Որդիին վերաբերեալ կ'ըսեն, թէ «կար ժամանակ մը, երբ ան չկար (կ.մ չէր)», եւ «իր ծնանելէն առաջ չկար (կ.մ չէր)», կամ «ոչինչէն ջինուած է», կամ «ուրիշ նիւթէ կամ էութենէ է» (այինչն՝ Հայր Աստուծմէ տարբեր), կամ «ստեղծուած է», կամ «փոփոխելի կամ այլալելի է», պանոնք կը նպովէ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այս յաւելուածները բոլորը ընդունուած եւ ուղղաբառ են, բայց բուն հանգանակին մաս չեն կազմեր եւ անոնց գործածութիւնը ընդհանրացած չէ: